ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--------- 2024 թվականի №-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի №391-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի լայնաշերտ տեխնոլոգիայի ծածկույթի որակի չափանիշներ սահմանելու մասին» №391-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում)՝
   1) վերնագրում «ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ» բառերը փոխարինել «ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ» բառերով:
   2) 1-ին կետում և Որոշմամբ սահմանված հավելվածի վերնագրում «(LTE) տեխնոլոգիայի ծածկույթի» բառերը փոխարինել «(4G/LTE, 5G/NR) տեխնոլոգիաների ծածկույթների» բառերով,
   3) Որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետում «(LTE) տեխնոլոգիայի բացօթյա ծածկույթի» բառերը փոխարինել «(4G/LTE, 5G/NR) տեխնոլոգիաների բացօթյա ծածկույթների» բառերով և նույն կետի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ազդանշանի (ընդունման) հզորությունը (RSRP, SS-RSRP) չբնակեցված տարածքների (բացօթյա տարածք) և ճանապարհների դեպքում (դԲմ)	Ազդանշանի (ընդունման) հզորությունը (RSRP, SS-RSRP) բնակեցված տարածքների դեպքում (բացօթյա տարածք)՝ շինություններ ներթափանցելիս ազդանշանի թուլացման գործակցի կիրառմամբ (դԲմ)	
	միջին	ուժեղ
≥-115	≥-105	≥-95

»

:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք.Երևան
----- 2024թ.